

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՒՄԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԱՅՏՆԻ ՎՅՈՒՆԱԿՈՒՎԸ

Ձեռագրերից և վիմական արձանագրություններից սկսած՝ հայերեն գրավոր խոսքում, ինչպես գիտենք, **վ** հնչյունի համար գործածության մեջ է եղել երեք տառ՝ **վ**, **ւ** և **ու**¹: Եվ ինչքան էլ կանոնակարգել են այդ տառերի տեղը բառերի այլևայլ դիրքերում, վերջնական արդյունքի չեն հասել. միշտ էլ եղել են շեղումներ. միևնույն բառը տարբեր ձեռագրերում կամ վիմական արձանագրություններում հնչյունագրել են տարբեր գրերով, ինչպես՝ **զինուոր**, **զինվոր**, **զինուր**: Մխիթարյան լեզվաբանները, որ վերականգնեցին գրաբարը, հայտնաբերեցին ու համակարգեցին ժողովրդին վաղուց անհասկանալի գրավոր լեզվի օրենքներն ու օրինաչափությունները, միաժամանակ իրենց ստեղծած բառարաններում ամենայն բարեխղճությամբ արձանագրեցին նաև գրաբարի համար մշակված կանոններից կատարված ամեն մի շեղում, իրար կողք բերեցին միևնույն բառի տառագրման տարբերությունները, որոնցով այսօր տեսանելի է դառնում այն ամբողջ արհեստականությունը, որ ընկած էր գրաբարյան ուղղագրության հիմքում, որը և, Ղ. Աղայանի դիպուկ բնութագրմամբ, առաջացրել է **մի կատարյալ բարեղոնական խառնակություն**:

Բավարարվենք Մխիթարյան հայրերի արձանագրած փաստով միայն՝ մատնանշելով **ւ** տառին վերագրվող հատկանիշները գրաբարում:

«Տառ՝ անուանեալ **հիւն**, **ւիւն**. ըստ տեղոյն ձայնաւոր երկբարբառ, իբրև **եու**, **իյու**, և ըստ տեղոյն բաղաձայն՝ որպէս մեղմ **վ**. յար և նման **մի** նոյն նշանագրի լատինացւոց, որ կրկին ձևով գրի, **Ս** որպէս ձայնաւոր **ու**, կամ ըստ գաղղիացւոց **իւ**. և **V**, որպէս բաղաձայն **վ**. հետևողութեամբ տառիս յունաց **γ**, **υ**. որ կոչի Հփսիլօն. և վերածի յերիս տառս լատինացւոց. **i**, **u**, **y**. Նոյնպէս և վաւ տառն արևելեան ազգաց՝ է **ւ** և **վ**. որ ըստ տեղոյն առնթրեր այլոյ ձայնաւորի լինի՝ **ու** և **ո**: Վասն այստրիկ որպէս ի մեզ **աւ**, է գի **օ**, և է գի՝ իբր ավ հնչէ:

Իբրու ձայնաւոր՝ յայտնի տեսանի առ նախնիս յանխտիր գրութեան բառիցդ **Եգիպտոս**, **եգիպտոս**, **եգուպտոս**: **Եթեովպացի**, **եթիովպացի**, **եթուովպացի**: **Կիւպրոս**, **կիպրոս**, **կիւրակէ**, **կիրակէ**, **կւրակէ**:

Որպէս ձայնաւոր՝ նոյնանայ իբր լծորդ ընդ **եու**, **իւ**, **ի**: Նմին իրի փոխանակ **ս** տա-

¹ Հ. Հյուբշմանն այն կարծիքին է, որ «v-ի համար մենք երեք նշան ունենք, որոնց արտասանության մասին հնարավոր չէ որոշակի բան ասել» (Հ. Հյուբշման, Հին հայերենի արտասանության ու տառադարձության մասին // Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե, 2004, էջ 165): Լեզվաբաններից ոմանք էլ (**Ա. Մեյե**, **Հր. Աճառյան**) այն կարծիքին են, թե դասական հայերենում **ւ** և **վ** տառերով տարբեր հնչյուններ էին արտահայտվում (**Ա. Գյուլբուղադյան**, Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 22-23):

որ լատինացւոց՝ մեք հանգոյն յունաց և գաղղիացւոց *ov, ou*, գրեմք *n*:

Իբրոս բաղաձայն՝ ի մեզ լծորդ է ընդ *վ*, զի անխտիր գրի *վաւաշ, վաւաշ. օթեւան, օթեւան. իջեւան, իջեւան, իջաւան, իջաւան* և այլն: Ի հին քերականութեան յն. և հյ. ի բաց ձգի մերս տառ բաղաձայն *վ*, և դնի միայն *բ*. զի տառն յն. փոխադրի ի *բ*. գոր օրինակ *Վասիլիոս*՝ է ըստ մեզ *Բասիլիոս* կամ *Բարսեղ*:

Առ մեզ չի՝ *ք* ըստ ինքեան ի սկզբան բառից, բայց միայն փոխառութեամբ ի բառից սկսելոց *հ* տառիւ. ուստի նոյն են *ւիւն* և *հիւն*. *ւիւծ*, *հիւծ*. *ւիւսել*, *հիւսել*. և այլն: Վասն որոյ ասի՝ *Իրինն* յօղական միայն է տառ, բայց գոր յօդէ՝ քեզ խըրատ առ»²:

Բառերի տարբեր մասերում *վ* հնչյունի *վ* կամ *ւ* գրելու հարցը շատ է զբաղեցրել գրող, մանկագիր, հրապարակախոս, մանկավարժ Ղազարոս Աղայանին³: Առաջին անգամ նա այդ հարցը քննել է 1888 թ. գրած «*Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրության մասին*» հոդվածում, այնուհետև հայոց լեզվի ուղղագրությանը վերաբերող իր համարյա բոլոր ելույթներում անդրադարձել է դրան, մինչև 1911 թ. գրած «*Պարոն Կարապետ Յաղուբյանին: Հորդորական*» հոդվածը:

Առաջին դրդիչը եղել է բայի կրավորական ձևերի տարատեսակ ուղղագրությունը: Գրական աշխարհաբարի ուղղագրության մշակման ու կանանակարգման երկարատև ընթացքում տարբեր հեղինակներ տարբեր ուղղագրության էին հետևում՝ շատ դեպքերում հաշվի չառնելով կենդանի լեզվում գործող օրենքները, հետևելով գրության ավանդական՝ մեկը մյուսից տարբեր, մեկը մյուսին հակադիր ձևերին: Նման վիճակ էր տիրում նաև բայի կրավորական ձևերի գրության մեջ: Մամուլում ու այլ հրատարակություններում միննույն բայը կրավորական դարձնելու համար տարբեր հեղինակներ օգտագործում էին երեք տարբեր տառեր՝ ու, վ և՝ ստեղծելով հինգ տարատեսակ ուղղագրություն: Այսպես.

1. *գրուում, գրուած, գրուել,*
2. *գրվում, գրուած, գրուել,*
3. *գրում, գրուած, գրուել,*
4. *գրվում, գրված, գրվել,*
5. *գրում, գրած, գրել:*

Վկայակոչելով կենդանի լեզվի՝ բոլոր բարբառներում անխտիր գործող լեզվական այն օրենքը, որի գործությամբ կից ձայնավորների արանքում անպայման հանդես է գալիս մի ձայնակապ, հիմնականում՝ *վ*, իսկ բառի ձևափոխման ժամանակ այդ կարգի բառերի ձայնավորանախորդ *ու*-ն փոխվում է *ք*-ի, ապա՝ սղվում, և մնում է միայն *վ* ձայնակապը, Աղայանը իր քննարկման ծանրության կենտրոնը դարձնում է նման դեպքերում *վ* թե՞ *ւ* գրելու հարցը: Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է համարում պարզել, թե բառերի մեջ ինչ պաշտոն է կատարում *ւ* տառը, խոսքի մեջ ինչ դեր են հատկացրել նրան մեր նախնիները: Տեսնելով, որ հայերենում *ւ*-ով սկսվող բառ չկա, բայց բառամիջում և վերջում *ւ*-ն մի շարք գործածություններ է ունեցել, Ա-

² ՆՀԲ, Եր., 1981, հ. 2, էջ 922, Ի տառ:

³ Եվ ոչ միայն Ղ. Աղայանին: Գրաբարին ու հայոց լեզվի պատմության անդրադարձած բոլոր ուսումնասիրողները, հայ թե օտարագրի, անխտիր անդրադարձել են այս հարցին:

ղայանը եզրակացնում է, որ **ւ-ն** «*մի անկախ հնչյուն չէ, այլ օժանդակ, օգնական հնչյուն*», որով

Մեր նախնիք ուզեցել են ունենալ **ու**, և գիրը դրել են **ո**-ի մոտ և շինել **ու**:

Ուզեցել են **և** ունենալ, կպցրել են **եչից**:

Ուզեցել են **օ** ունենալ, դրել են **այբի** մոտ՝ **աւ**:

Շատ տեղեր գրել են **եւ** և կարդացել **եօ**, ինչպես հոգնակի գործիական հոլովներում, այլն «**ւերքն**», փոխանակ **եօթն**: Տեղ-տեղ **եչի** հետ հնչվել է նաև իբրև **իւ** (իօ), ինչպես **եւղ** (իւղ), բայց այս անհարմար գտնելով, վերջը դրել են **ի** գրի մոտ:

Բառերի վերջերում, երբ ուզեցել են հնչել **աւ**, **եւ**, **իւ**, գրել են ոչ **վ**, այլ **ւ**, բացի **ով** վերջավորությունից, որովհետև **ո**-ի հետ դառնում է **ու**:

Երկու ձայնավորների մեջ ընկած **ւ**-ը ձայնը **ւ**-ով են գրել, ինչպես՝ **զաւակ**, **հիւանդ**, **յաւետ** և այլն: (Մնացած գրության մասին տե՛ս Հայկազյան բառարանում):

Մեր նպատակի համար ամենից ուշադրության արժանին այն է, որ **ի**-ով վերջավորված անունների սեռականը շինել են **ւոյ** և ոչ **վոյ**, ինչպես՝ **զինւոյ**, **գոտւոյ**, **տարւոյ**, **գործւոյ**, **գործւոյք** և այլն»⁴:

Այս ընդարձակ մեջբերման մեջ Աղայանի բոլոր վկայակոչումները ճշմարիտ են, մանավանդ **ւ** տառին վերագրված տարբեր հնչական արժեքները: Բայց թե ինչո՞ւ **ւ**-ին այդքան հնչական արժեքներ են վերագրել, ինչո՞ւ են հաճախ **ու**, **ո**, **ի** հնչյունները նշանագրել **ւ** տառով, ոչ միայն Աղայանը, այլև ողջ լեզվաբանական մտքի ներկայացուցիչները այնպես էլ չկարողացան վերջնական պատասխան տալ: Սկսած Մխիթարյան լեզվաբաններից մինչև այսօր՝ գրաբարյան ուղղագրության այդ իրողությունները զանազան մեկնաբանությունների են արժանացել միայն, գրության մեջ տեղ գտած փաստերը արձանագրվել ու բացատրվել են, բայց թե ինչո՞ւ և ինչպե՞ս է առաջացել նման վիճակ, նման ուղղագրություն, վերջնական պատասխանը դեռ չկա: Մեզ մնում է հետևել հարցի պատասխանի աղայանական՝ շուրջ քառորդ դար տևած որոնումներին, որի ընթացքում լեզվի բնական օրենքներին քաջագիտակ, այդ օրենքներով առաջնորդվելու պահանջ ներկայացնող Աղայանին նույնիսկ հաճախ միջամտել է նաև ստեղծագործող Աղայանը՝ ընդհուպ մինչև **վ** և **ւ** տառերին հաղորդելով գրական կերպավորում⁵:

Ղ. Աղայանը գտնում է, որ բառամիջում ու բառավերջում ավանդաբար գրվող **ւ**-ն չի կարելի փոխել **վ**-ով, որովհետև «*ւ գրելով՝ մեր հին ու նոր լեզվի շենքն անարատ կպահենք, բայց վ գրելով՝ հիմնովին կփոխենք նրա գեղարվեստական շենքը*»⁶ (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Իհին գրելով՝ Աղայանը լուծված էր համարում երկու խնդիր. մեր ուղղագրությունը մոտ էր լինում և՛ գրաբարին, և՛ արևմտահայ գրական լեզվին: Աղայանը ոչ գիտական մեկնաբանմամբ է մոտենում բոլոր այն հեղինակներին, ովքեր հայտնի տեղերում **ւ**-ի փոխարեն գրել են **վ**: Իսկ այդ հեղինակներից էին Խ. Աբովյանը, Գ. Հախվերդյանը, Բ. Պատկանյանը: Ղ. Աղայանը պնդում է, թե **վ** գրողները գիտակ-

⁴ Ղ. Աղայան, ԵԺ, հ. 3, էջ 320:

⁵ Ղ. Աղայան, Ես մեռած եմ // Ղ. Աղայան, ԵԺ, հ. 3, էջ 444-447:

⁶ Նույն տեղը, էջ 323:

ցաբար չեն ընտրություն կատարել, այլ «*ըստ ունակության, ըստ սովորության և առավելապես ըստ բնագղման*»⁷: Աղայանի այս մեկնաբանությունը առիթ դարձավ, որ երիտասարդ լեզվաբան **Սարգիս Սարգսյանը** հանդես գա մի ծավալուն հոդվածով՝ «*Հո՞ւն, թե՞ վեկ*»⁸:

Պատասխանելով Ս. Սարգսյանին, որը **ւ**-ն ձայնավոր է համարում, Աղայանը վկայակոչում է Հայկազյան բառարանը, ուր գրված է. «*Ի քեականության թրակ. ի բաց ձգի տառն մեր վ, որպես թե շատ իցեն լ և պ (այսինքն՝ բ) ըստ յունաց*»⁹: Ապա հարց է տալիս, թե ինչո՞ւ էին **վ** տառը ավելորդ համարում, եթե **ւ**-ն ձայնավոր էր և ոչ բաղաձայն:

Ղ. Աղայանը փորձում է հիմնավորել, որ 5-րդ դարում նույնիսկ **վ**-ի գործածության կարիք չի եղել, հետևապես և միևնույն հնչյունի համար երկու տառ պահելու կարիք, անհրաժեշտություն չի եղել: Նա վկայակոչում է Ղարաբաղի մայր բարբառը և նրա ճյուղերը, ուր չկա **ով** հնչյունակապակցություն, որպեսզի անխուսափելիորեն **վ** գրելու անհրաժեշտություն լինի: «*Ղարաբաղի մայր բարբառում և նրա ճյուղերում վեկի գործածության կարիք չկար և չկա այսօր էլ: Այս բարբառում չկա ո՞վ, այլ՝ հո՞ւ, որի սեռականն էր հիւր (գրոց լեզվում ո՞յր, մշեցոց՝ լի՞ր): Չունին գործիականի ով վերջավորության ոչ մի օրինակ, այլ միայն աւ, առանց բացառության, չունին ով ընդունելություն, այլ միայն աւ, նույնպես առանց բացառության. վերջապես չունին ով վերջավորությամբ որևէ գոյական անուն, այլ դարձյալ աւ, ինչպես՝ կով-կաւ, խոով-խոաւ, խորոված-խրաւած: Այսպես է և գոկերենում...*»¹⁰:

Ղ. Աղայանը որոշակի փաստերով ցույց է տալիս, որ բառամիջում կամ բառավերջում գրվող **վ**-ն ճարահատության արդյունք է եղել: Բառում հանդես եկող **օ** հնչյունը նշանագրել են **ո** տառով, որից հետո **ւ** գրել չէին կարող, որովհետև կդառնար **ու**, և ճարահատյալ գրել են **ով**: Իսկ եթե **օ** հնչյունի համար ունենային համապատասխան տառ և ոչ թե գործածելին **աւ** երկտառը, որը որոշ բառերում **օ** էր, որոշ բառերում՝ **ավ**, ապա **օ** արտաբերելու համար այդ տառից հետո կգրեին **ւ** և ոչ **վ**: Այսպես՝ **աւ, եւ, իւ, օւ** և ոչ թե **ով**: Այս ձևով հիմնավորելով **ւ**-ի գրության օրինաչափ լինելը հայերենի ուղղագրության մեջ և ցույց տալով ճարահատ շեղման պատճառը՝ Աղայանը հեշտությամբ **վեկ** - ը «վերացնում է» բառամիջից ու բառավերջից և դնում բառասկզբից ևս վերացնելու հարցը: «*Կարող չե՞նք միթե և բառասկզբներում դնել լին: Եթե ուզենանք, ինչո՞ւ չէ. այդ բոլորովին մեր բարի կամքիցն է կախված: Պատճառ բերել, թե այդ կարելի չէ, որովհետև լիւնը մտնում է և՛ երկբարբառի մեջ, և՛ կիսաձայնավոր է, և՛ ձայնակապ է, այդ պատճառներից և ոչ մեկը հիմք չունի*»¹¹:

Ղ. Աղայանը քննադատում է Ս. Սարգսյանի ինքնահնար պնդումը, թե միևնույն բաղաձայնը վանկի մեջ կարելի է վերջադաս գրել, բայց նախադաս՝ ոչ: Օրինակ՝ կա-

⁷ Նույն տեղը, էջ 321:

⁸ «Մուրճ» 1889, N 5, էջ 780-787:

⁹ ՆՀԲ, Եր., 1981, հ. 2, էջ 769, Վ տառ:

¹⁰ Ղ. Աղայան, ԵԺ, հ. 3, էջ 339-340:

¹¹ Նույն տեղը, էջ 341:

րելի է գրել **աւ**, բայց չի կարելի գրել **աւ**:

«Սրա տեսությամբ պետք է գրենք՝ **թիւ-թվի, թվով, կոիւ-կովի, հաշիւ-հաշվի, բայց հաւ-հաւի, հաւով, ցաւ-ցաւի, տերեւ-տերեւի. տարաւ՝ կարելի է, բայց տարւա, օրւա՝ ոչ, այլ պետք է գրել՝ տարվա, օրվա. և ինչո՞ւ, զիտե՞ք. որովհետեւ, ասում է, եթե գրենք **կուի, օրւա, անւան և լիւնը** կարդանք իբրեւ **վը**, «դրանով անմիջապէս կհերքենք **լիւնի ձայնավոր լինելը**» (ընդգծումն Աղայանին է - Ա. Հ.): Ուղիղ չէ՞ որեւմն ասածս, որ Սարգսյանը գոռով է ուզում **լիւնը** բաղաձայնների կարգից դուրս վնդել և հաստատել, որ նա միայն ձայնավոր է և ոչ նաև բաղաձայն, ինչպէս որ ընդունել են մեր նախնիք»¹²:**

Որպէս քննարկվող հարցերի ընդհանրացում՝ Աղայանը հայտնում է այն հաստատ համոզմունքը, որ **ւ** և **վ** գրերը սկզբից էլ եղել են բաղաձայն, **վ**-ն հաստ է հնչվել, **ւ**-ն՝ բարակ: Ժամանակի ընթացքում կենդանի առօրինականության բարեփոխմամբ նրանց ձայները հավասարվել են, դարձել նույնահնչյուն, «**ինչպէս՝ հ-ն և յ-ն բառերի սկզբում և ե-ն և է-ն բառերի մեջ**»: Եվ չնայած նրանք հավասարագոր ձայն ունեն, «**ոչ մէկը մյուսով չենք փոխանակում, ւ-ը թողնում ենք իրան տեղը, վ-ն՝ իրան**»¹³:

Ի, թե՞ **վ** գրելու հարցին Ղ. Աղայանը անդրադառնում է նաև «**Սուրբ լեզու**» հոդվածում, հետադարձ հայացքով մատնանշում, որ գրական աշխարհաբարի առաջնակարգ ներկայացուցիչները՝ Խ. Աբովյան, Գ. Հախվերդյան, Ռ. Պատկանյան և ուրիշներ, հայտնի տեղերում գրել են **վ** տառով:

Այստեղ Ղ. Աղայանը լռելյայն ընդունում է սեփական վրիպումը, երբ նախորդ հոդվածում **վ** գրողներին վերագրում էր ըստ սովորության կամ բնագողով գրելու մեղադրանքը: Ընդունելով, որ **ւ** և **վ** գրերի միջև հնչական որևէ տարբերություն չկա, որ դրանք բացարձակ նույնահնչյուն գրեր են, որ աշխարհաբարի համար քաղաքացիական իրավունք ապահովող և հետագա զարգացման հիմքերը դնողները հարազատ են մնացել բարբառներում գործող արտասանությանը, կարծես թե հարցը լուծված պետք է համարել, հաշտվել գրական աշխարհաբարի համար նախորդ մեծերից մնացած ավանդության հետ: Սակայն Աղայանը չի կարողանում հաշտվել երկու իրողության հետ: Նախ՝ գրաբարյան ուղղագրության համաձայն՝ բառամիջում և բառավերջում պետք է գրել **ւ**: Նա տեղյակ է, որ այդ օրենքը միշտ էլ խախտվել է, նույնիսկ Ներսէս Շնորհալին չի հետևել այդ օրենքին: Նա **Ա. Բագրատունու «Քերականությունից»** բերում է մի վկայություն այն մասին, որ Ներսէս Շնորհալու գրածների մեջ հանդիպում են **վ**-ով բառեր, ինչպէս՝ **նվագ, նվաստ, «և ոմանց ոչ հետևակ գրչաց գրել ի թվին, թվական, վարձատվութիւն**»¹⁴: Չնայած դրան՝ գրաբարյան տեքստերում իշխողը, կանոնիկը եղել է **ւ** գրությունը: Աղայանը չի հաշտվում **ւ**-ն **վ** գրելու մտքի հետ՝ գտնելով, ինչպէս արդեն նշել ենք, որ դրանով խախտվում է ավանդական գրության պատկերը, իր արտահայտությամբ՝ **հայերեն բառերի գեղարվեստական շենքը**:

Ղ. Աղայանը չի ընդունում բառամիջում **վ**-ի գրությունը նաև այն պատճառով, որ

¹² Ղ. Աղայան, ԵԺ, հ. 3, էջ 350:

¹³ Նույն տեղը, էջ 350:

¹⁴ Նույն տեղը, էջ 406:

վ-ն, նրա խորին համոզմամբ, ետնամուտ տառ է, որին հատկացվել է միայն բառասկիզբը և **ռ**-ից հետո գրվելը, և այդքանով էլ պետք է սահմանափակել նրա գործածությունը:

1892 թ. գրած *«Մեր ուսուցիչներին ընկերական նվեր»* ծավալուն հոդվածում ևս նա ուսումնասիրում ու պարզում է գրավոր խոսքում **ւ** գրի բոլոր դրսևորումները հայերենի ձայնավորների հետ՝ իրական փաստերից բխեցնելով համապատասխան եզրահանգումներ:

Նա վերանայում է նախորդ հոդվածներում արտահայտած իր այն տեսակետը, թե նախապես **վ**-ն հաստ է հնչվել, **ւ**-ն բարակ, և նույնացել են արտասանության բարեփոխման հետևանքով:

Անդրադառնալով **ու** ձայնավորի հետ **ւ**-ի գրության հարցին՝ Աղայանը մատնացույց է անում, որ **ու**-ից հետո ոչ միայն **ւ** կամ **վ**, այլև **յ** գրելու սովորություն չի եղել, այլապես չէին գրի *սոյն, դոյն, նոյն, սուին, դուին, դունոյ*: Նա նշում է, որ այս կարգի բառերը ուղիղ կարդալ չեն կարող, մինչև չիմանան նրա նշանակությունը, և բառի նշանակությունն իմացողը ուղիղ է կարդացել, չիմացողը՝ սխալ: Որ **ուա, ուե, ուի, ուու, ուո** բաղադրամաս ունեցող բառերում կից ձայնավորների արանքում **ւ** է կարդացվել, Աղայանը հաստատում է նաև հայերենի վանկատման օրենքով: Նա ելնում է հայտնի այն իրողությունից, որ հնչյունափոխության դեպքում **ու** և **ի** ձայնավորները դառնում են **ը**, ինչպես՝ *սուրբ-սըրբոց, սիրտ-սըրտի, տուն-տընակ, բուն-բընաւեր* և այլն:

1892 թ. Մանուկ Աբեղյանը հրատարակում է *«Հայոց լեզվի ուղղագրութիւնը»* վերնագրով մի գրքույկ, որտեղ, իմիջիայլոց, գրում է. *«Կարելի չէ գրել Աստուած, շուք, անւանել, քանի որ հետևյալ ձևերում ու-ն վերականգնում է իր հնչյունը՝ Աստուծոյ, շուք, անուն, տու, կատու, ձու, վերարկու, տիրացու, հեռու»*¹⁵ (ընդգծումը մերն է-Ա. Հ.): Մ. Աբեղյանը ելնում էր այն իրողությունից, որ *«գրութիւնն արտասանութեանը մօտեցած կըլինէր իսկապէս այն ժամանակ, երբ վ հնչյունի համար երեք նշանագրի փոխանակ ընդունուէր միայն մի տառ, օրինակ՝ վ, և բոլոր դեպքերում էլ վ հնչիւնն այդ տառով գրուէր՝ վնաս, ծարավ, երեվեցավ, զվարթ, հիվանդ, հովութիւն և այլն, բացի այն բառերից, որոնց մէջ վ-ահնչիւն ու-ն վերականգնել է իր ձայնավոր հնչիւնը»*¹⁶: Այս միտքն առիթ է դառնում, որ Աղայանը նորից անդրադառնա հայոց լեզվի ուղղագրական օրենքներին, լեզվական օրենքները պաշտպանի, իր կարծիքով, կամայական խեղաթուրումներից:

Հակադրվելով այդ տեսությանը՝ Աղայանը պահանջում է առաջնորդվել լեզվի օրենքով, նույն օրենքով պարզել՝ *օրուա՞* թե՞ *օրւա* գրելն է ճիշտ: Աղայանը ցույց է տալիս, որ հայերենում **ուայ** սեռականացուցիչ մասնիկ չկա, կա միայն **ա** սեռականացուցիչ, ինչպես՝ *Վան+ա, Գեղամ+ա, Դվն+ա* և այլն: Իսկ եթե բառը ուղղականում վերջանում է **ու** կամ **ի** ձայնավորով, սեռականում դրանք փոխվում են **ւ**-ի, ինչպես՝ *Բաքու-Բաքւ+ա, Շուշի-Շուշւ+ա*: Աղայանը նշում է, որ նույն երևույթը գործում էր նաև

¹⁵ Մ. Աբեղյան, Հայոց լեզուի ուղղագրութիւնը, Թիֆ., 1892, էջ 37-38:

¹⁶ Նույն տեղը, էջ 38:

գրաբարում, ինչպես՝ **բարի-բար+ւ+ոյ, տարի-տար+ւ+ոյ**։ Ինչ վերաբերում է ժամանակ ցույց տվող բառերին, ապա նրանք ունեն կրկնակի սեռական, ինչպես՝ **օր-օրի-օրւա, տարի-տարու-տարւա, ամիս-ամսի-ամսւա**։ Ըստ որում՝ երկրորդ սեռականները ծագում են ոչ թե ուղղականից, այլ առաջին սեռականից, ինչպես՝ **տարի-տար+ու-տար+ւ+ա, ամիս-ամս+ի-ամս+ւ+ա** և այլն։

Ապացուցելով, որ կից ձայնավորների միջև հանդես է գալիս մի **վ** կամ **ւ** ձայնակապ և պնդելով, որ այդ երկու գրերը բացարձակ նույնահնչյուն են, **մեկը հաստ չէ, մյուսը՝ բարակ, մեկը ձայնավոր չէ, մյուսը՝ բաղաձայն**, Աղայանը դարձյալ քննարկում է, թե այդ գրերը ինչ տեղ պետք է զբաղեցնեն բառագրության մեջ։ Նա խորապես համոզված է, որ վ-ն ետնամուտ տառ է, որ Մեսրոպը վ չի ստեղծել, որ այն Թրակացու «Քերականության» մեկնիչներն են «գողեգող» մտցրել բառագրության մեջ։ Միաժամանակ Աղայանը փորձում է ցույց տալ, թե ինչ ճանապարհով է վ-ն մտել բառագրության մեջ։ Նշելով, որ Մեսրոպը օ տառ չի ստեղծել, և **օ** հնչյունը տառագրվում էր **աւ** երկտառով, որը միաժամանակ **աւ** էր **հաւ, ցաւ, կաքաւ** և նման բառերում, **օ** էր **հոր, մոր** և նման բառերում, **ով** էր **բաւանդակ-բօվանդակ, հաւագ-հօվագ, դաւտ-դօվտ** և նման բառերում, իսկ գործիականում անխտիր **ավ** էր, փոխանակ **ով**-ի, Աղայանը կարծում է, թե հետագայում **աւ**-ի փոխարեն **ով** գրություն են մտցրել և **ո**-ից հետո հարկադրաբար գրել **վ**։ Աղայանը կրկին պնդում է, որ Մեսրոպը **ով** գրելու անհրաժեշտություն չի ունեցել, քանի որ, իր կարծիքով, նա գրերի գյուտը հղացել է Սյունյաց աշխարհում, հետևապես իր «Մաշտոցը» և «Ավետարանը» այդ բարբառին մոտ կգրեր, իսկ այդ բարբառով **ով** գրելու կարիք չկա, «այդ բարբառում չկա **ով**, այլ **աւ և օ միայն**», ինչպես՝ **հացաւ, հորաւ, մորաւ, ծաւ, կաւ, խաւ** և այլն։

Այս միտքը համոզիչ չէ, քանի որ մի բան է մտքի հղացումը, մի այլ բան՝ նրա իրականացումը։ Հայտնի է, որ գրերի գյուտի և առաջին թարգմանական գրականության լեզվի հիմքը եղել է Արարատյան խոսվածքը։

«Վեպի վերջնամուտ լինելը երևում է և նրանից, - գրում է Ղ. Աղայանը, - որ ոչ մի վրիպակ չի գտնվում, որ, օրինակ, աւ-ի և օ-ի տեղ գրված լինի ավ, մինչդեռ եթե այդ երկուքը միասին սկզբից գոյություն ունենային, լինելով նույնահնչյուն, նույն շփոթությունը հառաջ կբերեին հնագույն ձեռագրերում, ինչ որ առաջ են բերել հետին և նոր ձեռագրերում, և մանավանդ մեր հին ու նոր աշխարհիկ գրականության մեջ»։

Վ տառի վերջնամուտ լինելուն մի վերջին անգամ Աղայանը անդրադառնում է 1909 թ. գրած «Մեր վ տառի ծագումը» հոդվածում։ Այստեղ ի մի է բերում իր նախորդ հոդվածների դիտարկումները, դարձյալ ընդունում, որ նույնահնչյունությունը վերջնամուտ տառերի հետևանք է, որն իր «հակառակորդից» պակաս տեղ է բռնում բառագրության մեջ։ Աղայանը հոդվածը եզրափակում է հետևյալ խտացված ամփոփումով.

«Ամփոփումն։ Վեր վերջնամուտ է։ Վն և Վին նույնահնչյուն տառեր են, դրանցում բացարձակ չկա ոչ մի հնչական տարբերություն։ Թավ ու-ն պարզ ու չէ և ոչ լ, այլ ուվ, որ դառնում է և ըւ, ինչպես՝ տուշութիւն-տուվշութիւն, տըւշութիւն, տւշութիւն և տվշութիւն, նուաստ-նուվաստ, նըւաստ, նւաստ, նվաստ։ Հենց այս բառերից էլ ե-

րևում է, որ **լ** և **վ** նույնահնչյուն գրեր են: Ուստի մեր նախնիք ինչ տեղ որ սահմանել են **վնի** համար, նույն տեղերում էլ պետք է թողնել որ նա մնա, իսկ նրա տեղն է **ռ**-յի մոտ և բառասկզբներում՝ իրանց բարդություններով. ուրիշ ոչ մի տեղ **վն** չկա մեր հին և ընտիր գրվածներում, այլ միայն **լ** և թավ **ռ**, որ իր տեղը զիջում է **լինին** և ոչ **վնին**:

Աշխարհիկ լեզվի կրավորական բայերը և բայանունները չունեն թավ **ռ**, այլ պարզ **լին**, ինչպես՝ **լում, լել, լած, լող** (գործում, գործել, գործած, գործող): Թավ **ռ** չունեն և ոչ տեղական և ժամանակական բառերի կրկին սեռականները, ինչպես՝ **օրւայ, Շուշւայ**: Թավ չեն և հետևյալ բառերի **ուերը-բանուոր, զինուոր, երկուոր**, այլ պարզ **լին**, ուստի պետք է գրել **բանուոր, զինուոր, երկուոր, բարուր, սարուր, հնձուր**: Բառավերջերում եղած **ուն** դառնում է **լ**, ինչպես՝ **կատու-կատլի, հերու-հերւայ, Բաքու-Բաքլի, խաշու-խաշլի**»¹⁷:

Հետագա մեկ տասնյակի հասնող հողվածներում ևս Աղայանը պաշտպանում է իր մշակած ուղղագրական սկզբունքները՝ ելակետ ունենալով կենդանի լեզվում գործող օրենքները: Իր վերջին՝ 1911 թ. գրած **«Պարոն Կարապետ Յաղուբյանին: Հորդորական»** հողվածում գրում է. «Մենք չենք կարող լեզվին օրենք տալ, նրա համար կանոն սահմանել: Այդ օրենքը նա ունի արդեն բնությունից ստացած: Մենք պարտավոր ենք միայն գտնել այդ օրենքը և հնազանդիլ նրան: Օրինակ՝ **ի** և **ռ** ձայնավորները թեք բառերում դառնում են **ը** կամ սղվում իսպառ, ինչպես՝ **սուտ-սըտի** կամ **ստի, սիրտ-սըրտի** կամ **սրտի**: Սա մի լեզվական օրենք է, որի գործությունը տարածվում է բոլոր նման բառերի վրա: ... Այս օրենքն այնքան պարզ է, որ **«Մշակն»** անգամ հասկանում է գոնե կիսով չափ: Ասում եմ՝ կիսով չափ, որովհետև **«Մշակ»**-ում գրում են **հաշլի, թլի**, բայց ոչ՝ **խաշլի, կատլի** և ոչ՝ **օրւա, տարւա**: Նրանց օրենսգիտությունը դեռ մինչև այդտեղ չի հասել»¹⁸:

Սակայն Աղայանի այս համար ու հետևողական **վյունակոիվը** հաջողությամբ չպսակվեց¹⁹. հաղթող դուրս եկավ գրող-ստեղծագործող Աղայանի բանաստեղծական պատկերավորմամբ անձնավորված, **խոշոր, տգեղ, անձոռնի իր շենք ու շնորհքովն, իր ծուռ գլխովն ու կես պոչովը վախ ազդող, գողեգող մտցված վերջնամուտ վ տառք**: Բայց Աղայանի սկսած **վյունակոիվը** պատճառ դարձավ, որ հեղինակը տասնամյակներ շարունակ, իր իսկ բառերով ասած, **աղի, մաղի** հայոց լեզվի ուղղագրության դաշտը և այնտեղից դուրս բերի մեկից ավելի հայտնություններ, իր պատկառելի ավանդը բերի գրական աշխարհաբարի ուղղագրության մշակման ու կանոնակարգման բնագավառում:

¹⁷ Ղ. Աղայան, ԵԺ, հ. 3, էջ 463-464:

¹⁸ Նույն տեղը, էջ 489-490:

¹⁹ Մ. Աբեղյան, Մեր ուղղագրության մասին // **Արարատ**, Էջմ., 1913, №№ 11-12, Մ. Աբեղյան, Զեկուցում հայոց լեզվի ուղղագրության մասին, Էջմ., 1921, Մ. Աբեղյան, Ուղղագրական ռեֆորմը, Ե., 1925: